

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ 1992—1993 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

«Թոյլ տուք մանկտուոյդ և մի՛ արգելուք զդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»:
(Մտթ. ԺԹ 14—15):

Հավիտյաններից եկող Տերունական այս խոսքը ևս մեկ անգամ հաստատվեց սույն տարվա հուլիսի 3-ին, երբ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Արցախի թեմի առաջնորդ գերշ. Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանի, Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի սաների և մեծաթիվ հյուրերի ներկայությամբ տեղի ունեցավ Ս. Էջմիածնին կից Ս. Մարիամ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի ուսումնական տարեշրջանի փակման հանդեսը:

Տերունական աղոթքից հետո վարժարանի երգչախումբը կատարեց «Եկեղեցին Հայկական» երգը: Երեխաներն իրենց ի խորոց սրտի հնչող բարբառով և յուրովի մատուցմամբ հիրավի ներկաներիս հոգիներում և մտքերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու էությունն ու առաքելությունը նորովի ընկալելու լույս սփռեցին, որը, սակայն, ավելի իմաստավորվեց և ամբողջացվեց «Էջմիածնի զանգերը» ստեղծագործությամբ՝ հեղինակի՝ Արթուր Բոբիկյանի սքանչելի կատարմամբ:

Այնուհետև հանդիսության բացման խոսքով հանդես եկավ վարժարանի տեսուչ Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ արքազան հայր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, հարգելի ուսուցիչներ, սիրելի սաներ և ներկաներ:

Այսօր մեզ համար հոգևոր մխիթարության և ուրախության օր է, քանզի շատ տասնամյակներ անց հայոց դպրոցներում սկսեցին աղոթքներ և շարականներ հնչել, ազգային դպրոցների կողքին սկսեցին կիրակնօրյա դպրոցներ բացվել, որտեղ այսօր ավելի քան երբևէ անհրաժեշտությունը եղավ հայ մանուկների կրթության, հայ մանուկների հոգևոր դաստիարակության:

Հայկական կիրակնօրյա վարժարանները տասնամյակների պատմություն ունեն: Շատ ծանր պայմաններում կյանքի կոչվեցին կիրակնօրյա դպրոցները՝ սկսած 1915 թվականից, երբ հայոց Մեծ ցեղասպանությունից հետո թափառական մեր հայ զավակների կրթության հարցը օրհասական վիճակում էր: Հիրավի պետք է որ մեկ անգամ ևս այդ ծանր ու դժվարին պարտականությունը որոշեր և իր ուսերին կրեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Եվ ամբողջ Սիյոնքի տարածքով մեկ եկեղեցիներին կից ստեղծվեցին կիրակնօրյա վարժարաններ, որտեղ մեր հոգևոր հայրերը հայ մանուկին ծանոթացրեցին հայ հոգուն, հայոց հավատքին և Ավետարանի լույսին:

Ահավասիկ վերջին տարիների մեր հոգևոր-ազգային վերազարթոնքից հետո Հայաստանում ևս բացվեցին և օր-ավուր շատանում են կիրակնօրյա վարժարանները և դրանց թվում նաև Ս. Մարիամ Աստվածածնի անունը կրող մեր վարժարանը: Մենք այսօր գոհություն և փառք են տալիս Աստծուն և մեր անչափ մեծ գոհունակությունը հայտնում Վեհափառ Հորը, որ իր օրհնությամբ և իր ջանադրությամբ ստեղծվեց այս դպրոցը, որը գրեթե կես տարվա ընթացքում կարողացավ մեր մանուկներին տալ հոգևոր-բարոյական և իմացական դաստիարակություն և կրթություն:

Այսօր մեզ համար կրկնակի ուրախության օր է, որովհետև Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն է բերել մեզ ամենքիս, մեր դպրոցի սաներին, որպեսզի Աստուծո օրհնությամբ այս վարժարանը շարունակի իր գործունեությունը և տա Աստված, որ ինչպես Էջմիածնում, նույնպես և Հայաստանի մյուս քաղաքներում բացվեն նորանոր կիրակնօրյա վարժարաններ, որպեսզի հայ մանուկները ավելի կենդանի կերպով շփվեն Ավետարանի ճշմարտություններին, մեր հոգեցունց շարականներին ու սաղմոսներին:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստվածամոր անունը կրող կիրակնօրյա այն վարժարանը, որը դեռևս իր առաջին քայլերն է անում, կարողանա կանաչ ճանապրհով առաջնորդվել խաղաղության նավահանգիստ, հայ մանուկի հոգում կերտի ճշմարիտ հայեցի ու եկեղեցասեր ոգի, հայոց հայրապետների և մեր վարդապետների շնչով դաստիարակի և մեր անկախ պատմության համար պատրաստի արժանավոր զավակներ»:

Հոգեշնորհ Հայր Սուրբի խոսքից հետո վարժարանի սաների հոգեթով կատարմամբ հնչած «Զոն Վարդանանց», «Հիմի՛ էլ լռենք, եղբարք», «Պըլպուլն Ավարայրի» երգերը դահլիճի ողջ ներկաներին հոգեպես տեղափոխեցին Ավարայրի դաշտ՝ մերթ ականջալուր լինելով ռազմի ահեղագոռ շեփորների որոտին, մերթ սուսերների և վահանների կռան-կռփյունին, մերթ հայ քաջերի խրոխտ ձայնին և մերթ այս արիասիրտ հայորդիների խոկելի հիշատակը դայլայլող բլբուլի քնարին:

Սակայն այս ամենի ամփոփումն էր Արմինե Մարտիրոսյանի «Անի» երգի քաղցրաձորձոր և հուզաթրթիռ մատուցումը:

Այնուհետև Ս. Մարիամ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի աշակերտության անունից երախտիքի խոսքով հանդես եկավ Արմինե Ճուղուրյանը:

Մի պահ տևած դադարից հետո, դահլիճը կրկին լցվեց Փրկչի Ծննդյան Ավետիսներով. «Ավետիս մեծ խորհրդի», «Ավետիս», «Լուռ գիշեր», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» շարականների երգեցողությամբ ներկաներն զգացին Բեթղեհեմը՝ Աստուծո Որդու, Փառքի Տիրոջ մարդեղա-

նալը անշուք մսուրում, Սուրբ Կույսի ապրումները, հովիվների փառաբանությունը, մոգերի երկրպագությունը, ինչպես նաև Տիրոջ մկրտությունը Հորդանանի կոհակներում, և այդպիսով մեկ անգամ ևս հաղորդակից լինելով Տնօրինական ճշմարտություններին: Իսկ Տիրոջ հարության փառաբանությամբ ամենքիս կյանքի լեխառն ծովի խաղաղ նավահանգիստը հանգրվանելու հույս ներշնչեցին: Ապա Կարինե Քեշիշյանի «Հարության աղոթքի» արտաբուխ արտասանությամբ և երգչախմբի «Ով պարտիզպան» երգի գեղեցիկ կատարմամբ դաճլիճն ապրեց իր հոգևոր վերացման բարձրագույն պահը: Սակայն փոքրիկները չմոռացան երախտիքի տուրք մատուցել նաև Սուրբ Ավետարանի լեզվին իրենց հաղորդակից դարձնող առաջին թարգմանիչ-ուսուցիչներին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցին և Ս. Սահակ Պարթևին և մյուս սրբազան վարդապետներին՝ Վարդան Արևելցու «Որք զարդարեցին» գեղեցկահյուս շարականով:

Այնուհետև վարժարանի ուսումնական տարվա հաշվետվությամբ հանդես եկավ վարժարանի տնօրենուհի Ջուլիետա Ավագյանը, որ ի մասնավորի ասաց.

«Սիրելի Վեհափառ, Ձեր բարձր կարգադրությամբ և քաջալերանքով 1992 թ. նոյեմբերի 22-ին բացվեց Մայր Աթոռին կից Էջմիածին քաղաքի առաջին կիրակնօրյա վարժարանը Ս. Մարիամ Աստվածածին անունով: Ձեր օրհնությամբ և բարձր կարգադրությամբ բացման խոսքով և օրհնությամբ հանդես եկավ սիրելի Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանը: Այսպես կիրակնօրյա վարժարանը կյանքի կոչվեց իր 80 աշակերտներով: Խըստաշունչ ձմռան և վառելանյութի բացակայության պատճառով փակվեցին հանրակրթական դպրոցները, լույսի և սննդի բացակայության պատճառով իջել էր տխրության և մռայլության քողը քաղաքի հատկապես կրտսեր բընակչության՝ երեխաների վրա: Մեր կողմից որոշվեց երեխաների հոգու խավարը փարատել Հիսուս Քրիստոսի կենդանի լույսով՝ շարունակել դասերը: Մայր Աթոռի ունեցած առանց այն էլ սուղ վառելանյութի պաշարից մեզ բաժին հանվեց և բարի մարդկանց շնորհիվ շարունակվեց նորաձիլ վարժարանի կյանքը, որը լռել էր 70 տարիներ առաջ: Բացվեց մանուկ և Աստված հարաբերության 70 տարի առաջ փակված էջը:

Հիմնվելով մեր Հայրերի տեսակետի բարձր ու եզակի գնահատականի վրա, անհրաժեշտ է փոթորիկներով ու փորձություններով լի կյանքի շեմին կանգնած աշակերտին զինել Աստվածաշնչի կենդանի կյանքի գիտելիքներով, որպեսզի վաղվա Անկախ Հայաստանի քաղաքացին կարողանա պաշտպանել իր հայրենիքը և իր նախնյաց Սուրբ Եկեղեցին ու մշակույթը, որպեսզի հարատևի Հայաստան աշխարհը: Ամեն մեկս հպարտ ենք աշխարհի մշակութային գանձարանում մեր հայրերի թողած փայլուն ավանդով: Մենք էլ պետք է փորձենք մեր ավանդը թողնել հաջորդ սերունդներին: Մեր նըպատակն է՝ ուսուցանել մանուկներին՝ փորձության ժամին համբերել, դրժվարության մեջ՝ ելք փնտրել, տոկալ, նախանձի, ատելության պահը շրջանցել սիրով ու հարգանքով: Հնազանդվել պետության, իշխանության, ուսուցչի, ծնողի, մեծերի հրահանգներին և արթուն լինել Հայրենիքի և Եկեղեցու պաշտպանության մեջ: Ապրել և ստեղծագործել հայի նախնյաց արժանապատվությամբ:

Այս բոլոր հաջողությունները, սիրելի Վեհափառ Հայր, ի վերջո բերում են մեզ խոնարհվելու Ձեր գահի առջև, ասելու Ձեզ երախտիքի և շնորհակալության խոսքեր և մաղթելու՝ «երկար օրեր Հայոց Հոր...»:

Հանդիսության ավարտին վարժարանի շնորհալի սան Ծողակաթ Հարությունյանը ֆլեյտայով ներկայացրեց «Ինչու է աղմկում գետը» ֆիլմից մեղեդի: Հարկ է նշել, որ իրենց անզուգական նվագակցությամբ մեծ ոգևորություն էին առաջացնում և փայլ հաղորդում հանդիսությանը դաշնակահար Արթուր Բոբիկյանը և ջութակահարուհի 13-ամյա Տաթևիկ Սահակյանը:

Հանդիսության ավարտին իր հայրապետական մաղթանքներով և օրհնությամբ վարժարանի սաներին, ուսուցիչներին և ներկաներին դիմեց Ամենայն Հայոց Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Սիրելի սաներ և ծնողներ,

Ես շատ հավանեցի այս ամենը, այս դահլիճը՝ լուսավոր, բարեկարգ, ճաշակավոր, և մանավանդ ինձ ուրախացրեց ձեր բոլորի ներկայությունը: Երևի մեծ մասամբ ծնողներ եք կիրակնօրյա վարժարանի: Բոլորիդ բերում եմ իմ հայրական ողջույնը՝ բարի մաղթանքներով լի: Ես իմ գոհունակությունը պետք է հայտնեմ ձեզ, հարգելի ծնողներ, որ ձեր զավակներին բերեցիք այս կիրակնօրյա վարժարանի հարկի տակ, որպեսզի նրանք քրիստոնեական ուսում ստանան և դառնան ավելի բարոյական և հոգևոր նկարագիր ունեցող ապագա զավակները մեր ազգի:

Մենք, իբրև հոգևորականներ, համոզված ենք, որ որևէ ժողովուրդ, այդ թվում նաև մեր ժողովուրդը, չի կարող բարոյական իդեալների բարձունքին հասնել՝ առանց կրոնական դաստիարակության, առանց Ս. Ավետարանը և ընդհանրապես Ս. Գիրքը ճանաչելու, առանց մեր Եկեղեցին ճանաչելու և նրա կամարների տակ աղոթելու, կամ առանց ս. պատարագներին մասնակցելու՝ արժանի լինելու համար աստվածային շնորհների բաշխմանը ս. պատարագի սեղաններից: Այս ամենը մի ամբողջ ուսուցում է, որ մեր ժողովրդի կյանքում խարսխված է 1700 տարիներից ի վեր:

Դժվար և տխուր ժամանակների բերումով այդ ուսուցման ընթացքը ընդհատվեց մեր երկրում, բայց հիմա, փառք Աստուծո, մեր ժողովուրդն ապրում է իր հոգևոր վերածնունդը, զգում հոգևոր արժեքների ծարավը, որ շատ մարդկային է և բնական հնագույն ժամանակներից ի վեր, մինչև մեր օրերը:

Տեսնելով այստեղ Ս. Գայանե վանքի վանահոր՝ Տ. Գուրգենին, ես հիշեցի վերջերս իմ հանդիպումը գրեթե ծերունի մի մարդու, որը հիշում էր հիսուն-վաթսուն տարի առաջ Ս. Գայանե վանքում ծառայող մի սարկավագի, Հարություն սարկավագին, այդ դժվար օրերին, երբ Եկեղեցին հալածվում էր, և համարյա ժողովուրդը համարձակություն չէր ունենում եկեղեցի մտնելու, բացի մի քանի տարեցներից: Այդ սարկավագն ասելիս է եղել իր կնոջը և իր վստահելի մտերիմներին, թե՝ մի՛ վախենաք, էս էլ կանցնի, և էլի Եկեղեցին կծաղկի:

Ահա այս մարգարեությունն իրականացավ, ձախորդ օրերը ձմռան նըման եկան ու անցան, և մեր Եկեղեցին այսօր կոչված է իր առաքելությունը շարունակելու լայն հորիզոնների վրա: Այս ճանապարհի վրա ես մեծապես գնահատում եմ կիրակնօրյա վարժարանները, որոնք, իմ կարծիքով, դասական բարոյականություն ջամբելու համար նրանց: Եվ ես պարտք եմ զգում

իմ շնորհակալությունը հայտնելու բոլոր նրանց, ովքեր կազմակերպեցին Ս. Մարիամ Աստվածածին այս կիրակնօրյա վարժարանը: Իմ հատուկ գնահատանքը վարժարանի տնօրենուհուն, որ քիչ առաջ հանդես եկավ իր սքանչելի խոսքով: Մաղթում եմ, որ սկսված այս գործը շարունակվի Է՛լ ավելի լայն չափերով, և վարժարանը ոչ միայն 250 աշակերտ ունենա, այլև առաջիկա տարիների ընթացքում կրնկնապատկվի և եռապատկվի այդ թիվը: Մեր Էջմիածին քաղաքի ողջ աշակերտությունը պետք է ներգրավվի այս քրիստոնեական դաստիարակության գործի մեջ:

Իմ գնահատանքը նաև այսօր երգերով ու նվագներով հանդես եկող աշակերտներին, հատկապես երիտասարդ դաշնակահարին, որ շնորհալի կատարող է: Այն բոլոր արտասանություններն ու երգերը, որ մենք լսեցինք, ինձ խորապես մխիթարեցին և լավատեսություն ներշնչեցին: Թույլ տվեք ասել, որ այսպիսի մթնոլորտում ես իմ տարիքը մոռանում եմ և կարծում, որ ես էլ ձեզ նման երիտասարդ եմ:

Իմ գնահատանքը նաև Հայր Վազգենին, որ փայլուն աշխատանք է կատարում այստեղ: Կարծում եմ, վերջին անգամը չէ, որ այցելում եմ ձեզ: Հիմա, որ ձեզ ճանաչեցի, ձեզ լսեցի, հասկացա ձեր հոգին, ցանկալի կլիներ ինձ համար տարին մեկ-երկու անգամ այցելել ձեր հավաքույթներին և ձեզ հետ մեկտեղ ուրախանալ: Հայտնեմ նաև ձեզ, որ առաջիկա սեպտեմբերի երկրորդ կեսին մենք աշխարհի տարբեր երկրներից հրավիրել ենք մեր Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին՝ եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ, պատրիարքներ, շուրջ հիսուն հոգի, որոնք պիտի գան Էջմիածին ժողովի: Եթե համաձայն եք դուք, հատկապես տնօրենուհին, կկամենայի առաջարկել, որ մեր բարձրաստիճան հոգևորականներին հրավիրեք այստեղ և նման հոգևոր հանդիսություն կազմակերպեք, որպեսզի նրանք ևս, ինչպես հիմա ես, հոգևոր մխիթարություն ստանան և փառք տան Աստծուն, որ այսպիսի օրեր է ապրում մեր երկիրը և հատկապես Էջմիածինը, որ սուրբ քաղաք է մեզ համար, որովհետև այստեղ է գտնվում այն տաճարը, ուր ինքը՝ Հիսուս Քրիստոս, իջավ 1700 տարիներ առաջ և հիմնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այդ սուրբ տաճարից, այդ սուրբ խորանից բերում եմ ձեզ բոլորիդ, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, իմ հայրական ողջույնը, իմ հայրապետական օրհնությունը՝ բարի մաղթանքներով:

«Ողջ լերուք, զօրացեալք Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ս. Մարիամ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի հանդեսը եզրափակվեց աշակերտության և ներկաների միասիրտ աղոթքով՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան Սրբոյ Եկեղեցւոյ», ինչպես նաև ազգիս Վեհափառ Հայրապետի համար առ Աստված ուղղված մաղթերգով: